ՀԱՐՍԱՆՑԱՑ ԵՐԳԵՐ

Հարսանյաց երգերը այժմ բոլորովին մոռացված են։ Քաղաքում շատ վաղուց էին մոռացված, իսկ գյուղերում երգում էին մինչև վերջին ժամանակներս։

Հարսանիքները առհասարակ տևում էին երեք-չորս օր։ Հարսանիքից մի երկու օր առաջ փեսի ծնողները հավաքում էին իրենց ազգական և դրացի պառավներին՝ թել-գաթա թխելու համար։ Նախօրոք պատրաստում էին մի քանի պարկ ալյուր, յուղ և շաքար։ Այդ պառավները գալիս էին իրենց օխլովներով, թել էին բաց անում, խորիզ եփում, գաթա կապում և հետո բերում փուռը՝ թխում։ Հարսանյաց պսակի նախօրյակին փեսայի ազգական երիտասարդները՝ 2—3 հոգի, թամբած ձիերը հեծած, խուրջինները լցրած թել-գաթաներով ման էին գալիս իրենց ազգականների և բարեկամների տները, տալիս նրանց մի-մի գաթա և հրավիրում հարսանիք։ Գաթա բաժանող կտրիճները ունեին իրենց երգը.

Թել-գաթան հերգես իլինք,
Ձան գուդամ ձեզի հարսնիք,
Բարաս-մամաս պարև գանին,
Ձեզի մեր դուն համեցեք գանին։

Գաթա ստացողները զաթա բաժանողներին հյուրասիրում էին օղիով։ Երեկոյան այդ գաթա բաժանող երիտասարդները միանում էին և երկու-երեք ձիավոր միասին զբոսնում հարսանիքում նվագելու պայմանավորված երաժիշտների, այսինքն «զուռնաճիներիս» կամ «քեմեչեճիներիս» հետևից։ Նվագախումբը առաջներից նվագելով, ձիավորները հետևից գալիս էին փեսայի տունը՝ նախ ձիերի վրա նստած երկար ու բարակ պարում էին բակում, իսկ հետո ձիերի վրա նստած մտնում հարսանյաց առուր։ Մեծ աղմուկով, հաճախ խոշոր դժվարություններով, երկու-երեք ձիով ներս էին մտնում և ներսը դարձյալ ձիերի վրա նստած պարում ու երդում։

Այդ գաթա բաժանողներն էին քեֆ անում։ Քեֆը տևում էր մինչև կեսգիշեր, որից վերջը ամենքը ցրվում էին իրենց տները։

Առավոտյան, գեռ չլուսացած, սկսում էին հավաքվել փեսայի ազգականները և ընկերները և միասին երաժիշտների հետ գընում էին կնքահոր տուն, մեծ պատվով կընքահորը և նրա կնոջը նվագածությամբ տանում փեսայի տուն։

Հարսանյաց տան մեջտեղը, փեսի ընկերները շրջապատելով նրան, սկսում էին հագցնել փեսության շորերը։ Հագցնելը ըսկըսելուց առաջ «ավետիսի տան» միրիթ-աղասին դիմում էր կնքահորը զանազան ոտտանավորներով, խնդրելով «ավետիսի տանը» նվիրել մի որոշ գումար։ Այդ ոտանավորներում պատմում էին առհասարակ, որ վերևից ընկել է մի «պաղեցուցած խուշ», պետք է նրան տաքացնել, հագցնել, կերակրել և այլն։ Կնքահայրը տալիս էր իր նվերը, կտրիճները սկսում էին «պարերը» երգելով, զգեստավորել փեսին։ Հագցնում էին փեսին նոր շապիկ, վարտիք, նոր կոշիկներ, ժիլետ՝ արծաթե կոճակներով, շնման, վրայից կապում լայն կարմիր գոտի, իսկ վիզը կապում կարմիր շաբ (վզկապ)։

Զգեստավորման պարը առանձին էր։ Զգեստավորված փեսան նստել չէր կարող, նա կանգնած սպասում էր կնքահոր հրամաններին։ «Հարսնևորները» հավաքվելուց հետո սկսում էին պատրաստվել «հարսնառ գնալու»։ Փեսան բռնած կնքահոր տգի ձեռքից, որի մյուս ձեռքում լինում էր միշտ մի մեծ գնրոն, զարդարված կարմիր վարդերով, ընկերներով շրջապատված, գնում էր ասաջից։ Ընկերները երգում էին առանձին «պար», որ կոչվում էր «Հարսնառի պար»։ Հարսի տանը կես պսակը կատարելուց հետո, փեսան բռնած ձախ կողմից հարսի ձեռը, իսկ աջ կողմից կնքահոր որդու ձեռից, ընկերների ուղեկցությամբ գնում էր եկեղե-

ցի։ Ընկերները ամբողջ ժամանակ «պարեր-Լին երգում։ Պսակից վերջը, եկեղեցու դռնից մինչև փեսայի տունը երգում էին «պար», որ կոչվում էր «Իր ֆառերն ալ կը-փայլեին», փեսի տան դռան մոտ, մինչև աղավնիները ձեռքը բռնած, դռան շեմի վրա փեսի մոր երևալը երգում էին առանձին «պար»։ Փեսի մայրը հարս ու փեսայի գը-լուխների վրայից արձակում էր աղավնիներին և նրանց ներս ընդունում։ Այստեղ արդեն դադարում էին «պարերը» երգելը։ Այդ «պարերի» խոսքերը շատ աղավաղված էին, բայց իմաստը հասկանալի էր։ Այսօր ոչ մի «պար» չի մնացել, դիտողներ էլ չկան։ Մենք մեջ ենք բերում ծերունի ուսուցիչ Սի-բայել Զուրարյանի մեզ հանձնած հետևյալ «պարերը» (պարերգները)։

ՓԵՍԱ ՀԱԳՎԵՑՆԵԼՈՒ ՊԱՐ

1

Այսօր ես, թաքավոր ես նոր,
Բարոն մունեդիդ սեր հնազանդ մունեդիդ,
Ամենին հնազանդ մունեդիդ,
Այլ բաղվիր մեղ յուր դուռն.
Եվ շար դուղար և ղաբեց շարը
Եբանազան Հայոց Հայրաբեղը—
Սուրբ լուսավորիչ յուր անունով,
Եվ երեք խաչին անունով օրհնեց թաքավոր,
Որ ղերդինս բահեր դուսացյալ դին,
Զոր դային հավասարիչ բոլոր։

2

Մայրս Մարիամ սուրբ աստվածամայր—
Ետ, ժեք խաչին անունով օրհնեց թաքավոր,
Որ մեր թաքավոր նոր, օրհնեց թաքավոր,
Որ էր հարսն գույս գովյալ հավասարից բոլոր,
Հրեշտակ երգնից անցներ ու ասեր՝
Թաքավոր նա հոդյալ և գովյալ,
Մունեդիդը գովելով, անցներ ասելով՝
— Թաքավոր նա հոդյալ և գովյալ։

Փեսայի տնից մինչև հարսի տուն գնալու ժամանակ երգում են.

«Լույսն ալ լուսացավ, բաբի արև ձեզ...»[10]

ԱԼ-ԳՆԼԻՆ

«Ալ-ղեղին» կոչվում է հարսի երգը, որը նա երգել է առաջներում «խնակեճեսիի» գիշերը յուր ընկերուհիների առաջ։ Հարսանիքից մի օր տուայ հարսի տանը հավաքվում էին նրա ընկերուհիները և ազգականների աղջիկները, որոնք խնա էին գնում հարսնացուի մատները։ Այդ գիշերը հարսի ծնողները հրավիրում էին նվագողներ, և աղջիկները պար էին գալիս ու երգում։ Հարսնացուն երգում էր «ալ-գելին» կոչված երգը, որը հասել է մեզ երկու վարիանտով։

Հինա տրին բաղնիք դարին։,
Մազս չիլա-չիլա ֆրսեցին,
Ջադաքս փերչամ գըդռեցին,
Կլուխս փոշի հագուցին,
Խոլե կոգիս գաբեցին,
Օսկիները վիզս գախեցին
Քողը կլոխս ձգեցին,
Դարին քոշան, գայնեցուցին։

Մնաք պարով, հայր ու մայր,
Մնաք պարով, քույր, եղբայր,
Ես ձեղիմեն գեշթամ,
Սիրած յարիս ղունը զեշթամ։
Ինքս զուլամ, սիրդս գուղե,
Իմ լացածիս մի նայիք,
Աստված տրիլ է՝ զարքս զարքին,
Հասած ախչիգը սիրած զղին։

Այս երգերը այժմ մոռացված են, բայց նվագողները, հարսը ծնողներից բաժանվելու ժամանակ, միշտ նվագում են նրա տրխուր մեղեդին։ Ընդունված ձևականություն է, նվագածության ժամանակ հարսը, մայրը. քույրերը և ընկերուհիները կամաց, հեկեկալով, լաց են լինում։ Ասում են, որ պսակի օրը աղջկա ունեցած երեք աստղերից մեկը հանգչում է։

Պարև գեցիք, ազիզ մարիզ,
Աշթըխ ջամփորդ իմ,
Պարեզամներ, սոյ, ընտանիք
Շուտով ձեղի բիդ ձգիմ։
Ջամփաս հեռու, տառծը չիկա
Խարիր անտերիս.
Շինտենկերե վո՞վ գուգենա
Լսել իմ ղերդերս։
Քանի՞-քանի՞ ցավ բիդ բաշիմ.
Աղի արցունքով,
Գենջ օրերս բիդի մաշիմ
Լացով-գոցով ու կուքով։
Գարմիր քողով բաղընքեցինք
Իմ գենջ արևըս,
Միղքեգ չելլի, ազիզ մարիգ,
Իմ վերջին պարևըս։

[10] Այս երգը նոտագրված տե՛ս Մ. Լյուլեճյանի ժողովածուն։

[11] Այս երգը նոտագրված տե՛ս Մ. Լյուլեճյանի ժողովածուն։